

Արագածոտնի մարզի
Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչությանը

Համաձայն ՀՀ Սահմանադրության 53-րդ հոդվածի եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ ինձ տրամադրել տեղեկություններ հետևյալի մասին.

Արագածոտն մարզի ԹՂԻԿ գյուղը Խորհրդային Միության փլուզումից հետո կանգնած է պիտակելի ջուր ունենալու խնդրի առջև: Ոռոգման և խմելու ջրերի գործող համակարգերը չկան: Այսուրյան գետից պոմպով բերվող ջուրը օգտագործման համար պիտակելի չէ, քանի որ գետը հիմնովին աղտոտված է: Գյուղում մենք ակնհաստես ենք եղել երկու ամսական երեխայի, ում մաշկը լիովին դուրս էր տվել պոմպով բերված ջրում լողացման հետևանքով: Ըստ այդմ.

1. Մարզն ունի՞ ԹՂԻԿ գյուղում խմելու և ոռոգման համակարգերի գործունեության ապահովման ծրագիր: Եթե այո՝ ինչպիսի՞նք է այդ ծրագիրը, ի՞նչ ժամկետներում է իրականացվելու:
2. ԹՂԻԿիցիներին խոսքով՝ նրանք ունեն արտեզյան ջրի աղբյուր, որը հորելու և աշխատեցնելու դեպքում կարող է բավարարել բնակչությանը: Պատրաստվո՞ւմ է արդյոք մարզը լուծել գյուղի ջրի խնդիրը այդ արտեզյան ջրի աղբյուրն աշխատեցնելով:
3. Շիրակի մարզի Անիպենգա գյուղի տարածքում գործում է ջրավազան, որից ջուր է մատակարարվում Շիրակի մարզի մի շարք գյուղերին: Խորհրդային տարիներին նախատեսված է եղել, որ ջրավազանը պետք է ջուր մատակարարի նաև ԹՂԻԿ գյուղին, գյուղում մինչ օրս էլ կա խողովակային համակարգ: Համակարգը, սակայն, չի գործում, քանի որ ԹՂԻԿի խողովակների ելքը ջրավազանից փակել են՝ պատճառաբանելով, որ գյուղը Շիրակի մարզի տարածքում չէ և չպետք է օգտվի ջրավազանի ջրից: Խողովակների ելքը բացելու դեպքում գյուղն ամբողջությամբ կապահովվի ջրով: Ի՞նչ է անելու մարզպետարանը այս խնդրի ուղղությամբ: Հնարավո՞ր է արդյոք Շիրակի մարզպետարանի հետ բանակցությունների արդյունքում խողովակների ելքը բացվի:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) եւ հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումը:

Կանխավ շնորհակալ եմ՝

Ժաննա Պողոսյան, լրագրող

094933204

poghosyanzhanna@gmail.com

«ՍիվիլԼեթ» առցանց հեռուստաընկերություն:

08.02.2017թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

0201 ք. Աշտարակ, Վ.Պետրոսյան 4, Հեռ/ֆաքս (+374 232) 3 22 51
0201 г. Аштарак, В.Петросяна 4, тел /факс (+374 232) 3 22 51
0201 с. Ashtarak, V.Petrosyan 4, tel /fax (+374 232) 3 22 51 e-mail aragatsotn@mta.gov.am

№ _____
Ի պատասխան Ձեր 08-02-2017թ. գրության

**<<Սիվիլներ>> առցանց
հեռուստաընկերության լրագրող
Ժաննա Պողոսյանին**

ՀՀ Արագածոտնի մարզի Թլիկ գյուղի ջրամատակարարման խնդիրը քննարկվել է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության, ջրային պետական կոմիտեի և համայնքի ներկայացուցիչների հետ: Համայնքի ջրամատակարարումը վերականգնելու նպատակով առաջարկվել է ինչպես համայնքում խորքային հորի կառուցման, այնպես էլ Անիպեմզա գյուղի տարածքում գործող ջրավազանից ջուր մատակարարելու տարբերակները: Այդ տարբերակներից որն է ավելի իրատեսական՝ կպարզվի երկրաբանական և լաբորատոր հետազոտություններ կատարելուց հետո: Հետազոտական աշխատանքներն ավարտելուց հետո կկազմվի նախագծանախահաշվային փաստաթղթեր և համապատասխան ֆինանսական միջոցներ լինելու դեպքում՝ աշխատանքները կսկսվեն:

:

Գ. ԳՅՈՂԱԼՅԱՆ